

ՄԵԼԿ

Տարեկան պիտու 10 րուր, կէս տարեկան 6 րուր:
Առանձին համարները 5 կողմով:
Թիֆլիսում գրվում են միմյանց համարատուն մէջ:
Ստորագրողները պիտու են ուղարկել
Կապիտան. Պետրոսյան «Մուսկ»

Խմբագրությունը քաղ է տուտ օտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)
Հայտարարությունները ընդունվում է ամեն կողմով:
Հայտարարությունները համար գնալով են
խորանային թուղթ 2 կողմով:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Հայի անցեալ փառքը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ երևանից. Նամակ Ղուբայից. Նամակ խմբագրից. Ներքին լուրերը. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միացեալ ընկերութիւնը հայոց թիւրքիս. Արտաքին լուրերը. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՅԻ ԱՆՑԵԱԼ ՓԱՌՔԸ

Հին հայոց աւերակները կամ նրանց ներկայիս տեսնելով, մենք առհասարակ հիանում ենք նրանց փառահերոսութեան վրայ, գնայլով մենք շինութիւնների անմահ ճարտարագետութեան վրայ: Տեսնելով հայոց անցեալ կեանքից այդ փառաւոր մնացորդները, այդ եկեղեցիներն ու մատուռները, այդ իշխանական պալատները, մենք ակամայ բացականցում ենք՝ «որքան բարձր աստիճանի վրա պէտք է կանգնած լինէր հայոց ազգի անցեալ քաղաքակրթութիւնը»:

Բայց համեմատելով այդ երեւոյթները հայի այժմեան կեանքի համեմատն երեւոյթների հետ, մենք հակված ենք լինում կարծել որ այդ անցեալ փառքը մի խորուսիկ երազ էր:

Գուցէ մինչդեռ զեղեցիկ եկեղեցիներ էին կառուցվում—ու մի դպրոց չէր կար հայերի մէջ, փառաւոր իշխանական պալատների կողքին, կարելի է, ամբողջ խորին աղքատութիւն էր տիրում...

Եւ ճշմարիտ նշանաւոր երեւոյթներ մենք նկատում ենք և մեր ժամանակակից կեանքի մէջ: Գնացե՛ք մի որ և է հայաբնակ քաղաք կամ գիւղ,—և կը տեսնէք որ նոյն տեղ, որտեղ ձեր չորս կողմը խորին աղքատութիւն և խորին աղքատութիւն է տիրում, ձեր առջև կանգնած է մի հոյակապ, սրբաւոր քաղաքի շինած մի եկեղեցի, որ հարկը հազարներ է նստել հասարակութեանը,—իսկ դպրոց կամ ամենեւին չէր կայ, կամ եթէ կայ, մի ողորմելի խրճիթ է, որ աւելի մի աստուծոյ նման է, քան թէ դպրոցի: Մի փառաւոր եկեղեցի էր տեսնում ձեր առջև. երկու հարկեր քայլ հեռաւորութեամբ մի այլ եկեղեցի է կառուցված, իսկ այդ երկու եկեղեցիների մէջ տեղ դարձեալ մի նոր եկեղեցի է կառուցվում... Իսկ դպրոցը մի խնամա զեանափոր է, որի շինութեան և պահպանութեան համար նոյն հասարակութիւնը որ հարկը հազարներ է ծախում փառաւոր եկեղեցիներ շինելու վրայ, ընդամենը միանուագ 50 րուր է տուել... Եթէ այժմեան երեւոյթների վրա դատելով, դատենք և մեր անցեալ կեանքի փառքի մասին, այդ անցեալը մի շատ զարգացած, քաղաքակրթ անցեալ չի երևայ մեզ...

Ինչքան դարեր զոյգութիւն ունի հայոց ազգը. եթէ այդ բոլոր դարերի ընթացքում հայոց եկեղեցիների բնակիչ իւրաքանչիւր կրակի լավէր հասկանալի բարբառով ժամասցութիւնը, քարոզի բարոյականացնող, մոռաւորապէս զարգացնող կենդանի խօսքը, —այսօր հայոց ազգը աշխարհիս ամենազարգացած, ամենաքաղաքակրթ ազգերից միւր կը լինէր: Բայց կենդանի քարոզի,

Աստուծու խօսքն աւանդելու համար միթէ հարկաւոր էին այդ ահագին ծախսերը, այդ քարաշէն, մեծածախ շինութիւնները: Աւետարանի անմահ խօսքը կարելի է աւանդել և մի անշուք, համեստ, յարմար զահլիճում:

Եթէ հաշուենք այն ահագին գումարները որ հայոց ազգը ծախսել է դարերի ընթացքում քարերի և աղիւնների վրայ, —այդ գումարները հաւասար կը լինեն միլիոնների, որոնցով հայոց ազգի կրթութիւնը կարելի էր հասցնել ամենաբարձր աստիճանի և հաւասարացնել մեր քաղաքակրթութեան աստիճանը եւրոպական ամենազարգացած ազգերի քաղաքակրթութեան աստիճանի հետ:

Մեզ հաստատ աղբիւրներից պատմում են հետեւեալը: Թիւրքաց հայաստանում, Գիւմրի-Խանէ գիւղում, որ առաջ մի մեծ քաղաք է եղել, ժողովուրդը այն աստիճան աղքատ է, որ իր հայրենիքում հնար չը գտնելով ապրելու, անդադար գաղթում է և արդէն Գումրի-Խանէի մէջ շատ քիչ հայ ընտանիքներ են մնացել, որոնք նոյնպէս ամեն լուրջ պատրաստ են գաղթելու: Բայց, այնու ամենայնիւ նոյն Գիւմրի-Խանէի հայ հասարակութիւնը կառուցել է և աւարտել է մի հոյակապ, սրբաւոր քաղաքի շինած մի եկեղեցի, որ արժան էր գտնվել եւրոպական մի մայրաքաղաքի մէջ և որի վրայ այնպիսի ահագին գումարներ են ծախսել տեղի հայերը, որ այդ գումարներով կարելի էր ոչ թէ միայն դպրոցներ հիմնել գիւղի մէջ, բայց և անտեսական, երկրագործական կամ արուեստագործական կողմից ծաղկեցնել գիւղը, և հարկ չէր լինի գիւղի հայերին գաղթել իրանց հայրենիքից: Իսկ աղօթելու համար նրանք շատ լաւ կարող էին կառուցանել մի մաքուր, ընդարձակ և փոքր ծախս պահանջող սրահ:

Եթէ հայի անտեսական ամբողջ կարողութիւն կլանող փառաւոր շինութիւնները ձգտելին լինել կրթարաններ, այդ դեռ հասկանալի կը լինէր: Բայց հայը շինում է մի եկեղեցի, ինքն աղքատանում է տո՛ւնար շինելուց յետոյ, ստիպված է գաղթել իր տեղից և եթէ չը գաղթէր էլ,—այդ շինութեան բնակիչ երեք չէ լավում կենդանի, զարգացողիւ խօսք, այլ միայն կատարվում են արարողութիւններ: Եկեղեցիներ էք կառուցանում, բայց չէք պատրաստում մի խելացի և հիմնաւոր կազմակերպութեամբ հոգեւորականներ, որոնք պէտք է քարոզէին այդ եկեղեցիների բնակիչ և քաղաքակրթիչ ազգեցեւորիւն ունենային տգէտ ամբոխի վրայ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մայիսի 24-ին

Անցեալ տարի Ալվազեան կարապետ վարդապետը վ. Կաթողիկոսի հրամանով գնաց Ալաշկերտ և ապաւին իր հետ 900 րուրի սովորուկ-

ներին բաժանելու: Այժմ հաստատ աղբիւրներից լսում ենք, որ. 1) գ. հայրը 900 րուր լրիւ չէ բաժանել: 2) մի փառաւոր յայտարարութիւն է տուել տեղացի իշխանութեան (փաշային) որպէս թէ բոլորովին սով չը կայ Ալաշկերտում փաշան այս յայտարարութիւնը ուղարկել է Բ. Գումր սա էլ ներկայացրել է նոյնը Ներսէս պատրարգին, իբրեւ պաշտօնական հերքումն սովելոց մասնաժողովի յայտարարութիւնների: Եթէ այս լուրը հաստատվի, այն ժամանակ ի՞նչ անուն պէտք է տալ Կ. վարդապետին, Հրաւիրում ենք Կ. վարդապետ Ալվազեանին յայտնել հրապարակաւ այս լրի մասին իր ասելով:

Հաստատ տեղեկութիւն ունեմ, որ վ. Կաթողիկոսը ուղարկել է Գրիգոր Եպիսկոպոս Ալաշկերտացին, որ եկող սեպտեմբերից ձեռնարկում փիլիսոփայութիւն, ֆրանսէզի և գերմաներէն լեզուներն իրանց գրականութիւնով աւանդելու համար ուսուցչականներ հրաւիրէ: Ս. Ալաշկերտացի կարող է այդ նպատակի համար արտասահման էլ գնալ, եթէ Ռուսաստանում չը գտնվին ուղած մարդիկ: Հոգով համակրում ենք վ. հնափառ Կաթողիկոսի առ ձեռնարկն ունեցած դիտարկութիւններին և գործունէութեանը. բայց պաւտ ենք յայտ, որ ձեռնարկը մուգնել է տուել վ. հ. Հորթ թէ կան և ազգային տարրական, վիճակային և թեմական դպրոցներ, որք նոյնպէս կարօտ են նորին սրբութեան լուրջ մտախոհութեան և կարեկցութեանը:

Յուշի մէկից սկսվում են Ե. Թեմական դպրանոցի հարցաքննութիւնները. կարծիք չէ կայ, որ ժողովուրդը չի մասնակցի քննութիւններին և այս տարի, թէ և հրատարակված է տեղական թերթի մէջ, բայց ցանկալի էր, որ հոգաբարձութիւնը ժողովրդի մեծերին հրաւիրէր առանձին կերպով և յայտնէր թեմ. դպրանոցի նիւթական վիճակի ողբալի դրութիւնը: Գարաւնոցը վտանգի մէջ է. եթէ պ. պ. երէցփոխանները չը բարեհաճեն վճարել եկեղեցական գումարներից յատկացեալ հատկութիւն, դպրանոցը կարող է փակել իր I. II և III դասարանները և դառնալ լոկ ծխական դպրոց:

Ժողովուրդը պէտք է գիտնէ վ. Կաթողիկոսին և խնդրէ որ նախ կատարել տայ իր և ս. Սիւնոյի հրամանները երէցփոխաններին և գաւառական գործակալներին, որոնք համարձակվում են չը լսել յիշեալ հրամանների պատուէրները: Երևանայ նահանգի արդիւնքներից մի որ և է մասը յատկացնէ թեմական դպրանոցին, որի մէջ ամբողջ թեմից մօտ 220 աշակերտներ են կրթվում: Հոգաբարձութիւնը յայտնելով ս. Սիւնոյից հրամայված արդիւնքների ստանալու վրայ իր նախորդների օրով ժողոված 11,000 րուրից ծախս է արել, որը պէտք է անմատչելի դրամապաշտի համարվէր և այդ գումարից եկող սեպտեմբերին դպրանոցին մնացած կը լինի 3—4000 րուր: միայն, ջը գիտեմ այս հանգամանքում ո՞վ է աւելի մեղաւոր երէցփոխանները, որ իրանց օգուտն են մտածում միայն, թէ ժողովուրդը՝ որ զոյգելի անտարբերութիւն է ցոյց տալով, զէպի եկեղեցին և դպրոցը. Հոգաբարձութիւնը, որ գաղտնի ուսումնական մասը բարձրացնելու և արանով ժողովրդի համակրութիւնը զէպի դպրանոց գրաւելու խորհրդով, վտանգ դպրանոցի դրամապաշտի, գուցէ անվերապանալի կերպով. թէ վերջապէս մեղադրեմ հ. իշխանութիւնը. որ կարծես ձեր համար է հրամաններ արձակում և էլ չէ հետաքրքիր լինում թէ ո՞վ կատարեց իր հրամանը, և ո՞վ արհամարհեց: Թէ այսպէս և թէ այնպէս, մեր թեմական դպրանոցի ապագան վտանգալի է, եթէ եղած դրութիւնը չը փոփոխվի:—

Նորայր

ՆԱՄԱԿ ՂՈՒՐԱՅԻՑ

Մայիսի 26-ին

Մովսէս Խորենացու վկայութեամբ հայերը դեռ քրիստոնէութիւնը ընդունելուց մի դար ու կէս առաջ բնակվում էին դաշտավայրում, որը հիմայ մտնում է Ղուբայի գաւառի գծի մէջ: Բայց մեր գաւառը չէ ներկայացնում նշանաւոր հետքեր, որոնք հաստատէին, որ հայ ժողովուրդը վաղեմի դարերում բնակութիւն գցած լինէր այստեղ: Չունենք մենք այն սքանչելի տաճարները, արձանները և պալատները, որոնք, օրինակի համար, Երևանեան նահանգում, վկայում են թէ հայերը ինչ նշանաւոր կուլտուրական աստիճանի վրա էին կանգնած: Միակ նշանները, որոնցով կարելի է հաստատել, թէ հայերը մեր գաւառում մի ոչ հեռու ժամանակ բազմակի էին, քան թէ հիմայ՝ այս գերեզմաններին են և մի քանի գիւղերի ու տեղերի հայոց անունները, ուր հիմայ բնակվում են թուրքերը: Այս գերեզմանները ցրված են գաւառի դաշտավայրի վրայ, անտառների մէջ և գտնվում են քաղաքից 25, 30 վերստ հեռաւորութեամբ: Գերեզմանաքարերի արձանագրութիւնները չափազանց կրճատած են. մի քանիսները արձանագրութիւն չունեն, բայց միայն փորագրված են նրանց վրայ արեգակի, աղեղնի, նետի, վահանի, կոշիկների և կա՛կաւ քանդակներ և առհասարակ այն առարկաների պատկերը, որոնք ծառայում էին նրանց յայտնի արուեստների պարագմունքներին: Վերջապէս կան և այնպիսի քարեր, որոնց վրայ բնաւին ոչ չէ՛յ դուրս բերված չէ՛ ոչ խօսքեր, ոչ որ և իցէ առարկաների պատկերներ:

Ասկայն կարելի է տեսլ, որ այս գերեզմանաքարերի ու գերեզմանների հետազոտութիւնը կարող է փոքր ինչ տեղ ազդել այն հարցի վճռելու վրայ, թէ հայերը որ դարից են սկսել գաղթել Ղուբայի գաւառը:

Ներկայումս հայերը բնակվում են միայն երկու գիւղում՝ Նոր-Խաչմագում և Կիլիվարում. առաջինում—թուրքերի հետ խառն՝ 30 տուն հայ, 10 տուն թուրք, իսկ երկրորդում—միայն հայեր և թուրք հարկեր չորս տուն են: Բացի սրանցից մօտ հարկեր տուն հայ բնակվում են Ղուբայ քաղաքի մէջ և 20 տուն—Ղուբայում, ուր զբոսանվում է շիրվանեան պիւտուրական գունդի բնակարանը. բայց ոչ քաղաքի և ոչ Ղուբայի բնակիչները բուն դուրապեցիներ չեն, այլ եկած են Կովկասի միւս գաւառներից, 1830 թիւից ըսկած: Գեռ ևս ոչ հեռու ժամանակ հայերը մեր գաւառում բազմակի էին, քան թէ հիմայ: 1792 թիւին, երբ կամ Ջուրովի զորքերը պաշարում էին Ղուբայի դաշտավայրը, մեր գաւառը ունէր մի քանի գիւղեր հայ բնակիչներով: Հին խաչմագ. Ղուբայալի, Բարալի, Փաղար, (ներկայումս այս գիւղերում թուրքեր են բնակվում). բայց որովհետեւ այս գիւղերի հայերը բարեկամարար և ուրախութեամբ ընդունեցին ռուսներին, միշտ նպատակելով նրանց պաշարով, չէին կարող ռուսների գնալուց յետոյ դարձեալ մնալ թուրքերի մէջ. այս պատճառով ստիպված էին Ջուրովի զորքերի հետ գաղթել Ռուսաստան, զիտաւորապէս Ղլար և Ասորիստան. դեռ հիմայ էլ կայ Ղլարի գաւառում մեր դուրեցի գաղթականների մի գիւղ՝ Ղարաջալի անունով:

Այսպիսով բազմակի հայ գիւղերից այս րուպէիս մենք ունենք հայ բնակիչներով միայն երկու գիւղ՝ Նոր-Խաչմագ և Կիլիվար: Սակայն, եթէ նայենք սրանց վրայ այն տեսակետից, որ մի ժողովրդի ազգութիւնը որոշելու համար հարկաւոր է խմանալ, թէ այդ ժողովուրդը ինչ լեզուով է խօսում, կամ ինչ սովորութիւններ ունի, այն ժամանակ հազիւ թէ մեր խաչմագ-ցիներին ու կիլիվարցիներին կարելի կը լինէր ճանաչել հայ ազգութեան պատկանող անդամներ: Կորցնելով իրանց մայրենի լեզուն, աւանդութիւնները, նրանք միայն նրանով են զանա-

զանազան իրանց զբաղի թուրքերից, որ ամբողջ տարի մի կամ չատ չատ երկու անգամ են լինում Աստուծու տանը և ընտել ոչ մի հասկացողութիւն չունեն իրանց լիբանի վերաբերութեամբ։ Ազգային յատկութիւնների բացակայութիւնը կիրվարցիներում համեմատաբար առաւել են նշմարվում, քան թէ խաչմաղցիներում, որովհետեւ անհրաժեշտ գիւղի բնակիչները, բնակվելով գաւառի լեռնային մասում և հեռու լինելով քաղաքից, սակայն են ունենում միջոցներ յարաբերութիւն ունենալ քաղաքացիներին հետո Շատերը սրանցից ստիպում են իրանց գլուխները և չեն կատարում եկեղեցական ծէսերը. անձամբ ինձ յայտնի է, որ երկու կիրվարցիներ պահում են երկու երկու կին։ Ինչ անեն կիրվարցիները, որ նրանք օրինակ են վեր առնում իրանց գիւղի լիբանի քահանայից։ Այս վերջինը ոչ ժամատացութիւն է անում, ոչ պատ է պահում, ոչ հայերէն է խօսում (կիրվարցիները թաթարներն են խօսում, այս լեզուն աղճատեալ պարսկերէնին նման է) և յայտնապէս երկու կին է պահում։ Ուրեմն ինչ պահանջել խեղճ ողորմելի գիւղականից, եթէ Աստուծու տան ներկայացուցիչը և քրիստոնէութեան բարոյականութեան քարոզողը այսպիսի տղետ և անբարոյական մարդ է։

Թէպէտ այս գիւղերում կան դպրոցներ, բայց շատ փոքր և ողորմելի դրութեան մէջ են գրտանում, հոգաբարձուների անտարբերութեան և անազնութեան շնորհիւ։ Կիրվարի դպրոցը բնականաբար է բազուրի Մարգարիտական ընկերութիւնից 350 ռուբլ և 50 ռուբլուց աւելի ուղարկում են զանազան քաղաքներից. այս 400 ռուբլական եկամուտից դպրոցի համար ծախսվում է գուցէ ոչ աւելի քան 200 ռ., 180 ռ. վարձակալին և 20 ռ. մանր ծախս։ Իսկ մեր նացեալ 200 ռ. ուր է գնում, ոչ ոք ոչինչ չէ իմանում, բայց պ. հոգաբարձուից խաչմաղ ինչդի դպրոցը բազուրի Մարգ. ընկ. ստանում է 100 ռուբլի. բայց այս ընկ. օժանդակութիւնից ունի ևս 75 ռուբլ իր հաղար ռուբլ մայր գուժարի տոկոսը, որը ընծայել է շաշնի պ. Ալեք. տանովը։ Խաչմաղի դպրոցի վարձակալը մի ծոյլ քահանայ է։ Այս դպրոցը 9 ամիս փակ էր։ Յիմայ դպրոցը բայց է ու վարձակալութիւն մի և նոյն ծոյլ քահանայ է անում։ Ինչ և իցէ, այս դպրոցը առաւել ևս լաւ և ծաղկեալ դրութեան մէջ էր լինէր, եթէ միայն պ. Պետրոս Բէկ Վաղարովը, գիւղի իշխանը ցանկանար այդ ինչպէս տեսնում է ընթերցողը այս դպրոցները թէպէտ ապահոված են նիւթական կողմից, իսկ կրթութեան վերաբերութեամբ շատ թոյլ են։ Ահա քանի տարի է որ այս գիւղերում կան դպրոցներ, բայց մինչև այժմ այս գիւղերի ոչ միում գուք չէք գտնի մի երեխայ, որ գիտենար հայերէն խօսել։ Եւ զարմանալու ոչինչ չը կայ։ Բացի նրանից, որ այս դպրոցները գտանվում են այսպիսի ողորմելի դրութեան մէջ, նրանք ոչ մի ժամանակ չեն կարող բերել կանան օգուտ։ Երբեք բարեգործողների աշխատութիւնը չի բերի լաւ պտուղ, միշտեւ օրիորդների կերթութիւնը բարձի թողի կանայի հոգաբարձուներից։ Նոր սերունդի պատրաստութիւնը այնպիսի գիւղերում, ուր չեն խօսում մայրենի լեզուով, բնականապէս պէտք է գնաց դուրսնեապէս երկու սեւերի վերաբերութեամբ, ուսուցանելով ինչպէս աղաներին, նոյնպէս էլ օրիորդներին։

Հակառակ դիպուածքում, մասուկը, որը զբաղւում շատ լաւ էր խօսում ու կարգում հայերէն, դպրոցից դուրս գալուց յետոյ, իսկայն մասնում է, այն ինչ որ սովորել էր այնտեղ, պատճառը մայրը, քոյրը նրա հետ թաթարներին կամ թուրքերին են խօսում։ Ուրեմն անկեր է, որ առանց օրիորդների կրթութեան, առանց մայրերի պատրաստելը այս առաջին և ամենագլխաւոր մանկավարժների ազգայն դպրոցը չէ կարող պատրաստել մի հիմք լուսաւորութիւնը ժողովրդի մէջ հաստատուն մեծանելու համար։

Այսպիսի ազնիւ մտքեր յղացող անձինք, անշուշտ, իրենց վարձատրութիւնը բուն լաւ գործին յաջողութեանը կը սպասեն, բայց և այնպէս իրեն հայ, չեն կարող չը յայտնել ձեզ իմ խորին նորհալարութիւնքս և խնդրել որ բարեհաճէք նկատել զիս, այժմէն բաժանորդ, եթէ երբեմն ձեր ազգոգուտ առաջարկութիւնը իրականութիւնը գտնայ։

Չ. Տէմիրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հաստատ աղբիւրներից լուծւում ենք, որ Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճել է հաւանութիւն տալ թիֆլիսի ընդհանուր ուսուցչական ժողովի կայանալուն, պարտաւորեցնելով քաղաքային իւրաքանչիւր եկեղեցուն վերադիւնալ ժողովի անհրաժեշտ ծախսերի համար վճարել 20 ռուբլ. իսկ գիւղական ամեն մի եկեղեցուն 5 ռուբլ.։

Մի երիտասարդ խնդրում է մեզ յայտնել, որ պատրաստում է երեխաներին դիւրութեամբ զբաղւող և բնական գիմնադրալի ընդ որ պատասխանները մանկու է հասցնել թողնել «Մշակի» խմբագրատան մէջ։

Շնորհակալութեամբ տաքանք Շուշու մէջ տպւած, պ. Տ. Նազարեանցից թարգմանած և հրատարակւած գրքովը «Պոլսեան ուսուցչի օրագրից» հեղինակութիւն Լիւովսկի Այդ պատճառով մենք առաջ կարդացինք «Вѣстникъ Европы» ամսագրի մէջ և խորհուրդ ենք տալիս մեր ընթերցողներին կարգաւ այդ վերին աստիճանի հետաքրքիր և օգտաւէտ գրքովը, որ այժմ հայերէն թարգմանութեամբ ընծայում է հայոց հասարակութեան պ. Տ. Նազարեանցը։ Թարգմանիչը իրաւունք ունի նուիրել իր աշխատանքը հայ ծնողներին և դատարարներին։ Թող կարգան և հասկանան թէ ինչպէս դպրոցը կարող է մեղցնել երեխային։ Պարզիկի գինը 20 կոպէկ է։

«Кавказскій Курьеръ» լրագրում կարգում ենք հետեւեալը։ «Հաղորդում ենք, որպէս հաստատ լուր, որ հայոց կաթողիկոս Վեհափառ IV շատ վստահաւոր և անշուշտ կերպով հիւանդ է։ Խորհուրդ ենք տալիս թիֆլիսի հայոց հասարակութեան ներկայացուցիչներին հաւատարմաւ այդ արիւրալի լուրի ճշգրտութեան մասին, որպէս զի վաղորօք ուղարկվի Էմիմադին մի պատգամաւորութիւն ազգային սեփականութիւնը ամեն պատահաններից ապահովելու համար։ Հայոց կաթողիկոսանիստ վանքի մէջ հաշակաւոր Մանկուտե ներկայութիւնը այդ նպատակի համար բաւական չէ։» Ուստ յարգելի լրագրի հաղորդած լուրին մենք էլ աւելացնում ենք մեր կողմից թիֆլիսի հասարակութեանը ուղղված մի հրաւեր, ինչպէս Մատթէոս կաթողիկոսի ժամանակ է եղել, շուտով ուղարկել մի պատգամաւորութիւն Էմիմադին ազգային գանձը որ և է վտանգից ապահովելու համար։

Մայիսի 29-ին թիւրքաց Հայաստանից վերադարձած պ. Թոմասյանը կարգաց Արծրունու թատրոնում իր դատախազութիւնը «Թիւրքաց Հայաստանի մասին»։ Վուցէ կասեն որ Թոմասյանի դատախազութիւնը շատ մեծ սխառեմ չունէր, բայց անտարակոյս նա շատ հարուստ էր նոր և հետաքրքիր տեղեկութիւններով թիւրքաց Հայաստանի մասին։ Եւ այդ պատճառով շատ ցաւալի է որ ժողովուրդը քիչ էր հաւաքվել նրան լսելու համար։ Մեր խնդիրը ինչպիսի, որին աւելորդ չէր լինի քիչ թէ շատ ուսումնասիրել այն երկրը, որին նա բարոյապէս օգնել է ուղում, — բացակայ էր։ Լսողների մեծ մասը հասարակութեան միջին և մասամբ ստորին դասին էին պատկանում։ Պ. Թոմասյանը բաժանեց իր հրապարակախօսութիւնը երկու մասի վրա, որոնցից առաջին փաստական էր, իսկ երկրորդը բաղկանում էր ընդհանուր դատողութիւններից։ Ճիշտ թեւաբանները վրա հիմնվելով, պարտքը ցոյց տուցին մեզ որ Վանի նահանգում հայերը մեծամասնութիւն են կազմում, որ այդ տարրի ձեռքում է երկրի առուուրը, և արուեստները և առհասարակ տնտեսական կեանքը։ Վաստիսը ցոյց տուցին մեզ նմուշների մի հարուստ ժողովածու Հայաստանի գործուածներին։ Թոմասյանը այն միտքը յայտնեց որ Հա-

յոց ազգութեան նեցուկը ոչ կրօնն է, ոչ էլ հայոց խնտելիքներն, այլ հայ գիւղական դասակարգն է, որ չը նայելով բոլոր տառապանքներին, կապված է մնացել հայոց հողին, հաւատարիմ է մնացել հայրենիքին, այն ինչ ամբողջ արիւնքով արտաբերում է Հայաստանից և յետոյ անհետացել, ջնջվել է։ Վաստիսը այն համոզմունք է որ շատ հեշտ կը լինէր կապ հաստատել հայերի, քիւրդերի և ասորիների մէջ։

Կենդանիների հովանաւորութեան թիֆլիսի ընկերութեան տարեկան ժողովը. որ նշանակված էր մայիսի 31-ին, նախագահի և փոխ-նախագահի թիֆլիսից հեռանալու պատճառով յետաձգվում է մինչև 7 յունիսի, 121/2, իսկ վարչութեան ժողովը լինելու է յունիսի 5-ին, 7 ժամին երեկոյեան։

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են։ «Չը նայելով որ եղանակը չափազանց հով է անցնում, այնուամենայնիւ երեւանցիները պատրաստվում են Վարչախաղ գնալու։ Այն օրից երբ սովորութիւն է դարձած Երեւանի դատաստանները և վարչութեան հիմնարկութիւնները փոխադրել ամարանոց, մինչև այսօր, պաշտօնական տեղեկութեանց նայելով, մոտաւորապէս 200,000 ռուբլ փող է ծախսվել Վարչախաղի վրա։ Եթէ այդ դուռը ծախսվէր նոյն իսկ Երեւանի այլ և այլ բարեկարգութեանց վրա, այժմ Երեւանը մի եւրոպական քաղաքի կը նմանէր։ Բայց ով է մրտաւում այդ հաշիւների վրա։»

Երեւանից մեզ գրում են։ «Մեր նահանգապետ պ. Շալիկով գնաց թիֆլիս։ Ոմանք ասում են որ Երեւանի նահանգի կարուածական խնդրի վրձնելուն մասնակցելու համար է գնացել, իսկ ոմանք պնդում են, որ այլ ևս չի վերադառնայ Երեւան։»

Երեւ հաղորդում են Երեւանից որ մայիսի 24-ին Վախանեան դպրոցի դահլիճում վիճակախաղ էր յօդուտ դպրոցի։ Մեծ բազմութիւն կար։ Որքան արդիւնք զոյգացաւ վիճակախաղից, — թղթակիցը չը գիտէ։ Նոյն օրը երեկոյեան թատրոնական ներկայացումն կար նոյն դահլիճում։ Խաղում էին «Թուղթ խաղացողի կեանքը»։ Թատրոնը դատարկ էր, և երեւանցիք այդ ժամանակ իրանց տներում և կլուբում նստած թուղթ էին խաղում։ Պ. Ա. Մեւեանց կարգաց մի բանաստեղծութիւն։

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են, որ մայիսի 12-ին այդ քաղաքի կլուբի դահլիճում թատրոնական ներկայացումն տուց պ. Օսիպովի ուսու թատրոնական խումբը։ Խաղացին 1) Картины съ натуры, сцены изъ военной жизни, 2) Вспышка у домашнего очага, 3) Хочу быть актеромъ. Ներկայացումը լաւ անցաւ, բայց ժողովուրդը սակաւ էր։ Մայիսի 13-ին խումբը ճանապարհորդեց գէպի Ղուսար։

Ղուրաչից մեզ գրում են։ «Մեր գաւառի անտառապետը և նրա օգնականը բարեխղճաբար են վարում իրանց պաշտօնները, բայց օրից օր չի կենում հարստանալու են ժողովուրդը։ Պ. անտառապետի ուղարկութիւնն ենք դարձնում իր ոչ ծառաւորների անիրաւութիւնների վրա։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻ ՀԱՅՈՑ

Ահաւասիկ ընկերութեան Ընդհանուր ժողովը նախագահ Տ. Ա. Ալթուն Տիւրիի ճառին պատճէնը։

Ներեցէք, Տեառք, որ ինձ համար խիստ քաղցր պարտաւորութիւն մը կուտարեմ, ներկայելով Ձեզ իմ շնորհապարտ զգացումներս այն բարձր փառահռութեան համար, որով հաճեցաք պատուել զիս ի վեր քան զարժանիս, յանձնելով ինձ Կենդանական ժողովոյ նախագահութեան պաշտօնը։

Տեառք, այդպիսի մի փափուկ պաշտօնի նկատմամբ իմ անձնանահասութեան գիտակցութեամբս հանդերձ զայն ստանձնել,

մանաւաղ ներկայ պարտաւորից մէջ և իմ անձնական բազմադիմի գաղափարաց միջոցին, արդարեւ յանդիմութիւն մ'էր, սակայն հնար էր վարանիլ ձեր միահամուտ քուէից և այնքան համակրանք յայտնուած ձեր բարձր կամաց առջեւ։ Վստահ եմ Տեառք, որ ձեր ներողամտութեան ոգին և թանկագին աջակցութիւնը մեծապէս պիտի գիւրացնեն ինձ, պաշտօնիս բնութեան իմ վերայ դրած պարտաւորութիւնքը խղճի մտօք կատարել։

Այն առթիւ Տեառք, ներեցէք նաեւ որ երկու խօսք ալ ընկերութեան վիճակին և ընթացից վրայ ընեմ։

Ամենամեծ խորհուրդները մեծ արժէք չունին, եթէ գաղափարաց սահմանէն ելնելով չեն իրականանար։

Այդ մեծ խորհուրդներէն մին էր անշուշտ ազգին մէջ կրթութիւն ծաւալելու խորհուրդը, որ շատ ազգասէր զուխներ զբաղեցուցած և հոգնեցուցած էր ի բազմաց հետէ, առանց մեծ արդիւնք մը աւտադրելու։ Հայ ժողովուրդը մը կար որ կը զգար թէ կրթութեան պէտք ունի, բայց կրթուելու միջոց չունէր, Հայեր կային որ պատրաստ էին օգնութեան ձեռն կարկառել, բայց չը կար մարմին մը որ միջնորդ կանգնէր ժողովրդեան և իւր բարեկամաց մէջ։ Այդ մեծ խորհուրդին, այդ բարձր միջնորդութեան պատշաճաւոր մարմին տալու փառքը հայ երիտասարդութեան վերապահեալ էր։ Երեք չորս տարի առաջ եռանգուն երիտասարդաց մի քանի խմբեր անյոգիօք հաստատամուտութեամբ և անգուշանիւք այդ մեծ խորհուրդն երեք տարբեր մարմիններու միջոցաւ ներկայիցին աշխարհի, անոնց իւրաքանչիւրը ժամանակ մի առանձին ապրեցաւ, զործեց և իւր արդեամբքը փայլեցաւ, սակայն յետոյ զգալով թէ միութեամբ աւելի զօրանալով կարող պիտի լինէին իրենց նուիրական նպատակն արժանաւորն արդիւնաւորելու, այդ երեք մարմիններն յօժարակամ ի մի ձուլուեցան և ծագում տուին ներկայ Միացեալ ընկերութեան, որոյ համար չափազանցութիւն չեմ համարիր ըսել թէ ամեն Հայ սրտերու սիրոյ առարկայն է և ամբողջ հայութեան պարծանքը։ Այս գործը ձերն է, Տեառք, և ընդհանուր համակրութեամբ ողջունեցաւ ոչ միայն հայ հասարակութեանն, այլ և օտարներէ թէ իւր այսօրուան վիճակը քանի՜ երկանց և ողբիս անձնութիւնները և զոհողութեանց արդիւնք է յայտնի է։ Այսօր երեք հազարէն աւելի հայ մանկուք իւր հաստատած 27 դպրոցներու մէջ կրթութիւն կը ստանան։

Սուղ միջոցի մէջ այսպիսի հսկայ արդիւնք մը, Տեառք, արդարեւ մեր հիացման արժանի է. և թէպէտ միւս կողմանէ ընկերութեան ունեցած նիւթական միջոցներուն հետ բաղադրելով իւր բազմաժառանգ ձեռնարկութիւնները յանդիմութեան գործ մը համարել կարելի է, սակայն հարկ է խոստովանիլ թէ այդ յանդիմութիւնն ալ իւր փեմ կողմն ունի։

Գործի մը լաւ սկզբնաւորութիւնը, նորա յաջողութեան պայմաններն մին է, բայց միակ պայմանը չէ. եթէ գէշ սկսուած գործ մը յարաւեւութիւն չունենայ, ոչ ոք մեծ ցաւ կը զգայ, բայց երբ լաւ սկսուած գործ մը ջանից և գաղափարաց միութեան պահասութեան կը խանգարի և կը մեռնի, այնչափ աւելի ցաւ կը պատճառէ ամեն ազգասէր սրտերու, որչափ որ մեծ էին աւոր ծննդեան առթած բերկրութիւնն ու քաղցր յոյսերը։

Տեառք Երեւանիս, մեր ամենուս վրայ մանաւաղ ներկայ պարտաւորից մէջ և իմ անձնական բազմադիմի գաղափարաց միջոցին, արդարեւ յանդիմութիւն մ'էր, սակայն հնար էր վարանիլ ձեր միահամուտ քուէից և այնքան համակրանք յայտնուած ձեր բարձր կամաց առջեւ։ Վստահ եմ Տեառք, որ ձեր ներողամտութեան ոգին և թանկագին աջակցութիւնը մեծապէս պիտի գիւրացնեն ինձ, պաշտօնիս բնութեան իմ վերայ դրած պարտաւորութիւնքը խղճի մտօք կատարել։

Այն առթիւ Տեառք, ներեցէք նաեւ որ երկու խօսք ալ ընկերութեան վիճակին և ընթացից վրայ ընեմ։

Ամենամեծ խորհուրդները մեծ արժէք չունին, եթէ գաղափարաց սահմանէն ելնելով չեն իրականանար։

Այդ մեծ խորհուրդներէն մին էր անշուշտ ազգին մէջ կրթութիւն ծաւալելու խորհուրդը, որ շատ ազգասէր զուխներ զբաղեցուցած և հոգնեցուցած էր ի բազմաց հետէ, առանց մեծ արդիւնք մը աւտադրելու։ Հայ ժողովուրդը մը կար որ կը զգար թէ կրթութեան պէտք ունի, բայց կրթուելու միջոց չունէր, Հայեր կային որ պատրաստ էին օգնութեան ձեռն կարկառել, բայց չը կար մարմին մը որ միջնորդ կանգնէր ժողովրդեան և իւր բարեկամաց մէջ։ Այդ մեծ խորհուրդին, այդ բարձր միջնորդութեան պատշաճաւոր մարմին տալու փառքը հայ երիտասարդութեան վերապահեալ էր։ Երեք չորս տարի առաջ եռանգուն երիտասարդաց մի քանի խմբեր անյոգիօք հաստատամուտութեամբ և անգուշանիւք այդ մեծ խորհուրդն երեք տարբեր մարմիններու միջոցաւ ներկայիցին աշխարհի, անոնց իւրաքանչիւրը ժամանակ մի առանձին ապրեցաւ, զործեց և իւր արդեամբքը փայլեցաւ, սակայն յետոյ զգալով թէ միութեամբ աւելի զօրանալով կարող պիտի լինէին իրենց նուիրական նպատակն արժանաւորն արդիւնաւորելու, այդ երեք մարմիններն յօժարակամ ի մի ձուլուեցան և ծագում տուին ներկայ Միացեալ ընկերութեան, որոյ համար չափազանցութիւն չեմ համարիր ըսել թէ ամեն Հայ սրտերու սիրոյ առարկայն է և ամբողջ հայութեան պարծանքը։ Այս գործը ձերն է, Տեառք, և ընդհանուր համակրութեամբ ողջունեցաւ ոչ միայն հայ հասարակութեանն, այլ և օտարներէ թէ իւր այսօրուան վիճակը քանի՜ երկանց և ողբիս անձնութիւնները և զոհողութեանց արդիւնք է յայտնի է։ Այսօր երեք հազարէն աւելի հայ մանկուք իւր հաստատած 27 դպրոցների մէջ կրթութիւն կը ստանան։

Սուղ միջոցի մէջ այսպիսի հսկայ արդիւնք մը, Տեառք, արդարեւ մեր հիացման արժանի է. և թէպէտ միւս կողմանէ ընկերութեան ունեցած նիւթական միջոցների հետ բաղադրելով իւր բազմաժառանգ ձեռնարկութիւնները յանդիմութեան գործ մը համարել կարելի է, սակայն հարկ է խոստովանիլ թէ այդ յանդիմութիւնն ալ իւր փեմ կողմն ունի։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՆԻՆ

Թիֆլիս, 29 մայիսի

Հայոց խնդրոյն լուծման մասնաւորապէս նըպաստելու յատկացած և Եւրոպայ հրատարակելի մի լրագրոյ հաստատուին, անտարակոյս, շատ օգտաւէտ հետեանք կը խոստանայ։

Ձեր այսօրվան համարին մէջ այդ մասին հրատարակած աղբերն՝ ըստ ինձ, ոչ մի հայ չէ կարող առանց համակրութեան կարգաւ։